# ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

## ԵՎ

## ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹԵՄԻ

## ՄԻՋԵՎ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմը (այսուհետ՝ Թեմ), այսուհետ միասին՝ Կողմեր, գիտակցելով հայագիտական հետազոտությունների բացառիկ կարևորությունը՝ որպես պետական քաղաքականության գերակա ուղղություն, ինչպես նաև հայության ազգային ու մշակութային անվտանգության ապահովման հզոր գործոն, նպատակ ունենալով աջակցել հայագիտության ոլորտում հրատապ հիմնարար և կիրառական խնդիրների լուծմանը, որոնցից են՝ հայագիտության բնագավառում նոր գիտական ու գիտակրթական ենթակառուցվածքների ստեղծման և զարգացման ֆինանսավորումը, գիտական կադրերի արդյունավետ սերնդափոխության ապահովումը, Հայաստանի Հանրապետության մարզերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում հայագիտական կառույցների ստեղծումը, համոզված լինելով, որ գործուն և արդյունավետ համագործակցության հաստատումը կխթանի հայաստանյան և արտասահմանյան, այդ թվում սփյուռքահայ գիտական համայնքների, ինչպես նաև անհատ գիտնականների մասնակցությամբ միասնական հայագիտական գիտակրթական և տեղեկատվական դաշտի ստեղծումը, երիտասարդ մասնագետների փոխանակումը և արտերկրի

երիտասարդ հայագետների վերապատրաստումը Հայաստանի Հանրապետությունում, կարևորելով միջազգային չափանիշներին համապատասխանող հայալեզու և օտարալեզու հայագիտական պարբերականների հրատարակման ու էլեկտրոնային տարբերակների համացանցով տարածման, ինչպես նաև հայագիտական բովանդակությամբ բազմալեզու կայքերի ստեղծման անհրաժեշտությունը, և ձգտելով մշակել ու ներդնել հայագիտության բնագավառում միջազգային համագործակցությունը խթանող մեխանիզմներ, համաձայնեցին ներքոհիշյալի վերաբերյալ.

## Հոդված 1

Սույն Մտադրությունների հուշագրի առարկան հայագիտական հետազոտությունների ոլորտում ծրագրերի իրականացմանը նպաստելն է:

## Հոդված 2

Համագործակցությունն իրականացնելու համար Կողմերը կխրախուսեն հայաստանյան, ինչպես նաև հայաստանյան-ռուսաստանյան համատեղ գիտական խմբերի և անհատ գիտնականների միջև համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացումը՝ հայ պատմագիտության, բանասիրության (առանձնակի ուշադրություն դարձնելով արևմտահայերենի ոլորտի գիտական ուսումնասիրություններին), արվեստագիտության, ազգագրության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, իրավագիտության և այլ ոլորտներում:

## Հոդված 3

Սույն Մտադրությունների հուշագրի շրջանակներում Կողմերը ստանձնում են պարտավորություն ֆինանսավորելու Կոմիտեի կողմից անցկացվող գիտական նախագծերի մրցույթի շրջանակներում ֆինանսավորման երաշխավորված հայաստանյան, ինչպես նաև հայաստանյան-ռուսաստանյան համատեղ գիտական

խմբերի և անհատ գիտնականների կողմից իրականացվելիք գիտահետազոտական ծրագրերը:

## Հոդված 4

Սույն Մտադրությունների հուշագրի շրջանակներում Թեմը կաջակցի նաև անհատ գիտնականներին՝ կրթաթոշակների տրամադրման կարգով:

## Հոդված 5

Սույն Մտադրությունների հուշագրի շրջանակներում Կողմերը կխրախուսեն և կաջակցեն նաև հայագիտության արդի հարցերին նվիրված գիտաժողովների, գիտագործնական հանդիպումների, ամառային դպրոցների անցկացմանը:

## Հոդված 6

Կողմերը հրապարակում են սույն Մտադրությունների հուշագրի կատարման մասին տեղեկատվությունը իրենց պաշտոնական կայքերում:

## Հոդված 7

Սույն Մտադրությունների հուշագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում ծագած ցանկացած տարաձայնություն կլուծվի նամակագրության կամ Կողմերի ներկայացուցիչների հանդիպումների ընթացքում՝ բանակցությունների միջոցով:

## Հոդված 8

Կողմերն իրավասու են փոփոխել կամ լրամշակել սույն Մտադրությունների հուշագիրը: Ցանկացած լրամշակում և փոփոխություն ձևակերպվում է առանձին արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի լիազորների ստորագրելու պահից և կազմում է սույն Հուշագրի անբաժանելի մասը:

## Հոդված 9

Սույն Մտադրությունների հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից եւ գործում է հինգ (5) տարի ժամկետով: Գործողության ժամկետը ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ երեք (3) տարիների համար, եթե Կողմերից ոչ մեկը ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի սույն Մտադրությունների հուշագիրը դադարեցնելու իր մտադրության մասին: Այս դեպքում, Կողմերը պարտավորվում են իրականացնել մինչև Հուշագրի դադարեցումը ստանձնած ֆինանսական պարտավորությունները:

Կատարված է Մոսկվա ք., 2016թ.-ին, երկու բնօրինակով:

| | |
|---|---|
| ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ<br><br>Նախագահ՝<br><br>Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՈՂՄԻՑ<br><br>Թեմի առաջնորդ՝<br><br>Տ. ԵՊՐԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ |

2016թ., 19 հունվարի, Մոսկվա